## ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

**ԽԱՉԱՏՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ,
պատմական գիտությունների թեկնածու
ՀՏԴ 94:070

# ՎՐԱՍՏԱՆԻ 1924 Թ. ՀԱԿԱԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՄԱՄՈՒԼՈՒՄ

**Բանալի բառեր և արտահայտություններ.** Վրաստան, հակախորհրդային ապստամբություն, հայկական սփյուռք, «Հայրենիք», «Հուսաբեր», «Պայքար», «Արև»:

**Ключевые слова и выражения:** Грузия, антисоветское восстание, армянская диаспора, «Айреник», «Усабер», «Пайкар», «Арев»:

**Key words and expressions:** Georgia, anti-soviet rebellion, Armenian diaspora, «Hayreniq», «Husaber», «Payqar», «Arev»:

Այսրկովկասում խորհրդային իշխանության հաստատումը հարթ ուղիով չընթացավ: Խորհրդայնացումից կարճ ժամանակ անց այսրկովկասյան հանրապետություններում տեղի ունեցան հակախորհրդային ապստամբություններ: Հայաստանում հակախորհրդային ապստամբությունը տեղի ունեցավ երկրում իշխանությունը բոլշևիկներին հանձնելուց երկուսուկես ամիս անց՝ 1921թ. փետրվարին: Վրաստանում խորհրդային իշխանությունը տապալելու զինված փորձը տեղի ունեցավ ավելի ուշ՝ 1924թ. օգոստոսի վերջին: Վրաստանի ապստամբությունը որոշակի տարածում գտավ նաև Ադրբեջանում:

Հայտնի է, որ սփյուռքահայ հասարակական-քաղաքական միտքը լայնորեն անդրադարձել է 1921թ. փետրվարյան ապստամբությանը[1]: Բավական հետաքրքիր են նաև սփյուռքահայ որոշ թերթերի կողմից Վրաստանի ապստամբությանը տրված գնահատականները:

1922 թ. օգոստոսին Վրաստանի սոցիալ-դեմոկրատական (մենշևիկյան) կուսակցության ակտիվ դերակատարությամբ ստեղծվեց

[1] Այս մասին առավել մանրամասն տե՛ս Ստեփանյան Խ., 1921թ. փետրվարյան ապստամբության պատճառներն ու հետևանքները սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ, Երևան, «Լուսակն», 2016, 200 էջ:

Վրաստանի անկախության ընդհատակյա կոմիտեն[2], որը ձեռնամուխ եղավ նախապատրաստվել Վրաստանում բոլշևիկյան իշխանությունը զինված ապստամբության միջոցով տապալելու գործին: 1924թ. օգոստոսի 28-ին Ճիաթուրայում (Արևմտյան Վրաստան) վրաց իշխան Գեորգի Ծերեթելիի գլխավորությամբ պայթեց հակախորհրդային ապստամբությունը[3]:

Կարճ ժամանակամիջոցում ապստամբները գրավեցին Արևմտյան Վրաստանի մեծ մասը, և որոշ շրջաններ՝ հանրապետության արևելյան մասում: Օգոստոսի 31-ին Խորհրդային Վրաստանի արտակարգ հանձնաժողովին հաջողվեց ընդհանուր առմամբ կոտրել ապստամբների հիմնական ուժերին: Ապստամբությունը վերջնականապես ճնշվեց սեպտեմբերի 4-ին:

Նախ նշենք, որ Վրաստանի օգոստոսյան ապստամբությունը խիստ քննադատության ենթարկվեց խորհրդային վարչակարգի կողմից: Անդրկովկասի կոմունիստների պաշտոնաթերթ «Զարյա Վոստոկա»-ն գրում էր, որ «հիմարություն էր մտածել տապալել խորհրդային իշխանությունը՝ բանվորների, գյուղացիների և ժողովրդական լայն զանգվածների իշխանությունը»[4]: Ըստ թերթի՝ այս իշխանության դեմ չի կարելի ապստամբել, այլ միայն հնարավոր է ավանտյուրիստական դրսևորումներ իրականացնել, և մենշևիկների այդ դրսևորումը միայն ավանտյուրա էր[5]: Ապստամբության անկման պահին նույն թերթը գրում է, որ վրաց ազնվականների ապստամբությունն ընդամենը բուտաֆորիա էր՝ առանց համապատասխան քանակության զենքի, փամփուշտի, նախապատրաստության, լավ մարտիկների: Ըստ բոլշևիկյան պաշտոնաթերթի՝ ապստամբները հույս են ունեցել, թե անգլիացիները դեսանտ կիջեցնեն Բաթումում, տարագրության մեջ գտնվող վրաց մենշևիկների առաջնորդ Նոյ Ժորդանիան կգա, Թիֆլիսը կվերցնեն բոլշևիկների ձեռքից, և ամբողջ Անդրկովկասը, ապա նաև Ռուսաստանը կապստամբեն[6]:

Ինչպես նշեցինք, Վրաստանի հակախորհրդային ապստամբությունը որոշակի գնահատականների արժանացավ նաև սփյուռքահայ թերթերում:

---

[2] ჯიოქია ლ., 1924 წლის აჯანყება დასავლეთ საქართველოში, სადოქტორო ნაშრომი შესრულებულია ისტორიის დოქტორის აკადემიური ხარისხის მოსაპოვებლად, თბილისი, 2012, էջ 57.

[3] Նույն տեղում, էջ 135, հմմտ. Голинков Д., Крушение антисоветского подполья в СССР, книга 2, Москва, Издательство политической литературы, 1980, էջ 199:

[4] “Заря Востока”, Тифлис, 1924, 31 августа.

[5] Նույն տեղում:

[6] “Заря Востока”, 1924, 2 сентября.

Մեր կարծիքով, այդ գնահատականների ուսումնասիրությունը հետաքրքիր է հատկապես Փետրվարյան ապստամբության հետ համեմատության համատեքստում: Մի կողմից Հայաստանն իրենց հաշվարկներում լուրջ չընդունելու վրաց «ապստամբների» դիրքրոշումը, մյուս կողմից Հայաստանը հնարավոր արյունահեղության մեջ ներքաշելու սփյուռքահայ հասարակական-քաղաքական շրջանակների մտահոգությունը կարևոր քննարկման են արժանացել: Այս խնդիրների լուսաբանումը, բացի գիտական հետաքրքրությունից, կարծում ենք ունի նաև արդիական կիրառական նշանակություն: Ներկա աշխարհաքաղաքական իրողությունում անցյալի սխալներից խուսափելը խիստ անհրաժեշտ է հայ և վրաց հասարակությունների համար:

Սփյուռքահայ թերթերն էլ հենց Վրաստանի հակախորհրդային ապստամբության օրինակով բացահայտում են հայ-վրացական համատեղ ճանապարհի այն խութերը, որոնցից պետք է հնարավորինս զերծ մնալ ապագայում:

Հոդվածում մենք քննության ենք առել դաշնակցական և ռամկավար ազդեցիկ երկուական թերթերի մեկնաբանությունները Վրաստանի ապստամբության վերաբերյալ:

Բոստոնի դաշնակցական «Հայրենիք» օրաթերթը սկզբում ոգևորված էր Վրաստանի դեպքերի կապակցությամբ: «Ապստամբութիւնը նոր աղաղակող ապացոյց մըն է, որ վրաց ժողովուրդը ոչ միայն հաշտուած չէ խորհրդային կարմիր լուծին հետ, այլեւ, չի կրնալով արդեն տանիլ զայն լռելայն ու համբերութեամբ, զէնք է բարձրացուցեր անոր դէմ»,- գրում է թերթը[7]: Ըստ թերթի խմբագրի, Վրաստանում, նաև Հայաստանում, կացությունն այնքան ծանր էր, որ տեղի բոլշևիկները միայն բանակի օգնությամբ են կարողանում պահպանել իրենց իշխանությունը: Ուստի, թերթի եզրահանգմամբ, «Վրաստանի ապստամբութիւնը պոլշեւիկներուն դէմ կռիւ մըն է ոչ միայն յանուն դեմոկրատիայի ու ազատութեան, այլեւ՝ անկախութեան»[8]: Սակայն, երբ պարզ դարձավ ապստամբության արագ ձախողումը, ու նաև մի շարք այլ հետաքրքիր մանրամասներ, «Հայրենիք»-ը սկսեց առավել «զուսպ» արտահայտվել վրաստանյան դեպքերի կապակցությամբ: Այդուհանդերձ, մեր այս մեկնաբանությունը չի ենթադրում, որ վրաց ժողովուրդը չէր ուզում պայքարել ազատության և անկախության համար:

[7] «Հայրենիք», Պոսթըն, 1924, 4 սեպտեմբերի:

[8] Նույն տեղում

Վրաստանի հակախորհրդային ապստամբության օրերին Ժնևում տեղի էր ունենում Ազգերի լիգայի ընդհանուր նստաշրջանը: Ապստամբները հույս ունեին, որ այդ առիթը օգտակար կլինի ապստամբությանը միջազգային աջակցություն ապահովելու տեսակետից: Սակայն «Հայրենիք»-ը գրում է, որ Ազգերի լիգայում Վրաստանի ապստամբության առիթով նրա անկախության հարցը բարձրացնելը միայն «բարոյական արժէք կունենայ», որովհետև Ռուսաստանը Ազգերի լիգայի անդամ չէ, և նրա վրա ճնշում գործադրելու որևէ հնարավորություն այդ կազմակերպությունը չունի[9]: Ըստ էության, «Հայրենիք»-ը ակնարկում է, որ ապստամբությունն ավելի շատ քարոզչական նպատակ է հետապնդել, և գործնական հաջողության հասնելու առումով նրա ղեկավարները իրատեսական հաշվարկներ չեն կատարել:

«Հայրենիք» օրաթերթն առանձին անդրադառնում է Վրաստանի ապստամբության հանդեպ Թուրքիայի ունեցած շահագրգռությանը: Թուրքիայի ակտիվությունը Վրաստանյան դեպքերի հանդեպ ցույց է տալիս, որ 1921թ. Կարսի պայմանագրով ընդունված խորհրդաթուրքական սահմանը խիստ վտանգավոր է հատկապես Խորհրդային Միության համար: Այս հանգամանքը անդրկովկասյան հանրապետությունների՝ բոլշևիզմի հանդեպ ունեցած թշնամանքի պայմաններում կարող էին օգտագործել թուրքերը[10]: Թերթը միաժամանակ վտանգավոր է համարում Վրաստանի ապստամբությանը հետևելով Հայաստանում զենք բարձրացնելը խորհրդային իշխանության դեմ, որը, ինչպես նշվում է, կարող են ծրագրել Հայաստանի հարևանները՝ վրացիները, ադրբեջանցիները, կովկասի լեռնականները[11]: Ինչպես տեսնում ենք, մի կողմից Թուրքիան իր դիրքերն առավել ամրապնդելու նպատակով կարող էր օգտվել Վրաստանի ապստամբության խորացումից և ներխուժել Այսրկովկաս: Մյուս կողմից, թերթը մտավախություն է հայտնում, որ նույն Թուրքիան կօգտագործի կովկասյան ժողովուրդների հակախորհրդային տրամադրությունները: «Հայրենիք»-ի համար առավել մտահոգիչ էր այն հանգամանքը, որ Հայաստանը, իրերի բերումով կարող էր ներքաշվել ապստամբության մեջ, որը բնավ ցանկալի չէր: Իսկ թուրքական ներխուժման հետևանքների մասին խոսելն ավելորդ է:

Հետաքրքիր է նաև «Հայրենիք»-ի անդրադարձը Վրաստանի ձախողված ապստամբության «դասերին»: Ամենակարևորն այն է, որ միայն

[9] Նույն տեղում, 6 սեպտեմբերի:
[10] Նույն տեղում, 21 սեպտեմբերի:
[11] Նույն տեղում, 24 սեպտեմբերի:

կովկասյան բոլոր ժողովուրդների համաձայնեցված և համերաշխ գործունեության պարագայում էր հնարավոր հաղթական պայքար մղել բոլշևիկյան ռեժիմի դեմ: Թերթը մեղադրում է վրացիներին, որ նրանք միայն Ադրբեջանի «բարեկամությունն» էին փորձել ապահովել՝ կարծելով, թե Հայաստանը միանգամից կհետևի իրենց[12]: Մեր կարծիքով, այս պարզաբանումը հերթական ապացույցն է այն բանի, որ առանց Հայաստանի մասնակցության ցանկացած անդրկովկասյան տարածաշրջանային քաղաքական նախագիծ, ի վերջո, ձախողվելու է:

«Հայրենիք» օրաթերթում Վրաստանի ապստամբության վերաբերյալ առանձին վերլուծությամբ է հանդես գալիս տարագիր դաշնակցական գործիչ Սիմոն Վրացյանը: Վերջինս ապստամբության միակ արդյունքը համարում է «հուսախաբությունը»[13]: Ս. Վրացյանն իր հոդվածում (Ս. Մասուրյան ստորագրությամբ) գրում է, որ վրացիները կարողացան վարպետորեն քարոզել իրենց ապստամբությունը, հատկապես հաշվի առնելով Ազգերի լիգայի ընդհանուր նստաշրջանը, սակայն, քանի որ Եվրոպան խաղաղության էր ձգտում, վրացիների քարոզչական հնարքն արդյունք չունեցավ: Ս. Վրացյանը գտնում է, որ համառուսական բոլշևիկյան ճակատի դեմ պայքարելու համար պետք է ունենալ համառուսական հակաբոլշևիկյան ճակատ[14]: Այսինքն, առանց ռուս ընդդիմադիր ուժերի մասնակցության, խորհրդային մյուս ժողովուրդները չէին կարող հաջող պայքար մղել բոլշևիկյան իշխանությունների դեմ:

Իր խմբագրականներից մեկում «Հայրենիք»-ը, որպես ընդհանրական գնահատական, ապստամբության ղեկավարների ազգային, անկախական ձգտումները հաշվի առնելով հանդերձ, այն արկածախնդրություն է համարում[15]:

Այսպիսով, Բոստոնի «Հայրենիք»-ը օրաթերթն, անդրադառնալով 1924 թ. Վրաստանի հակախորհրդային ապստամբությանը, մատնանշում է մի շարք կարևոր հանգամանքներ: Անկախ նրանից, որ ապաստամբությունը արագ պարտություն կրեց, նրա լայն տարածումը փաստում էր, որ վրաց ժողովուրդը դժգոհ էր խորհրդային իշխանությունից և ձգտում էր ազատության ու անկախության: Միաժամանակ աներկբա է այն իրողությունը, որ ապստամբության ղեկավարներն իրատեսորեն չէին գնահատել խորհրդային բանակի հնարավորությունները: Նրանք ավելի

[12] Նույն տեղում, 4 հոկտեմբերի:
[13] Նույն տեղում, 16 հոկտեմբերի:
[14] Նույն տեղում, 17 հոկտեմբերի:
[15] Նույն տեղում, 6 սեպտեմբերի:

շատ ակնկալել էին միջազգային հանրության աջակցությունը, որը Խորհրդային Միության հետ լարված հարաբերություններ պայմաններում, քիչ հավանական էր: Այս առումով ապստամբության դիմելն ավելի շուտ արկածախնդրական քայլ կարելի էր համարել: «Հայրենիք» օրաթերթը առանձնացնում է նաև ապստամբության վտանգավոր հետևանքները Հայաստանի համար: Թուրքիայի հնարավոր ներքաշվելը, կարող էր ծանր կորուստների տեղիք տալ:

Դաշնակցական թերթերից Վրաստանի հակախորհրդային ապստամբությանն անդրադառնում է նաև Կահիրեի «Հուսաբեր»-ը: Այստեղ ևս սկզբում ողջունել են Վրաստանում տեղի ունեցող «անկախական» շարժումները:

Թերթի խմբագիր Վահան Նավասարդյանը Վրաստանի ապստամբությունը համեմատում է Հայաստանի 1921թ. փետրվարյան ապստամբության հետ: «Վրաստանը լռեց չորս ամբողջ տարի, տարաւ ամէն բռնութիւն, տոկաց այն գազանութիւններուն, որոնք սովորական երեւոյթ դարձած էին ռուսական երկրի բովանդակ տարածութեան վրայ եւ սակայն օր մը, յաւելելով արեան տուրք տալու գնով, ան նոյնպէս պոռթկաց, զանգուածօրէն ու տարերայնօրէն, կրկնելով հայ ժողովուրդի, «Փետրուար 18»-ը նաեւ իրենց երկրին մէջ»,- նշվում է խմբագրականում[16]: Հետաքրքիր է այն համեմատական դիտարկումը, որ ի տարբերություն Հայաստանի, Վրաստանի ժողովուրդը գրեթե չորս տարի կարողացավ տանել բոլշևիկյան բռնությունները: Ըստ թերթի, սրա պատճառն այն է, որ «վրացի պոլշեւիկները, այս վեր է ամէն կասկածէ, բարոյական անկումի ու այլասերումի այն մակարդակին չէ հասած, որուն վրայ կեցած է սկզբի օրէն հայանուն պոլշեւիկը»[17]: Ըստ էության, «Հուսաբեր»-ը ևս կարևոր է համարում վրաց ժողովրդի ձգտումը բոլշևիկյան լուծը թոթափելու և անկախության վերականգնման համար:

Անդրադառնալով ապստամբության արդյունքներին՝ թերթը գտնում է, որ տվյալ միջազգային քաղաքական իրողության պայմաններում դրանք էական չէին կարող լինել: Վրաստանի ապստամբության օրինակով «Հուսաբեր»-ի խմբագիրը գրում է, որ «հակապոլշեւիկեան պայքարը պիտի դառնայ ռուսական կեանքի բնականոն երեւոյթը: Պայքարը չի կրնար ժամանակաւոր ըլլալ բռնութեան մը դէմ, որ կը կրէ գերազանցօրէն տեւական բնոյթ»[18]:

---

[16] «Յուսաբեր», Գահիրէ, 1924, 11 սեպտեմբերի:

[17] Նույն տեղում:

[18] Նույն տեղում, 25 սեպտեմբերի:

Արդեն անդրադարձանք Բոստոնի «Հայրենիք»-ի այն դիտարկմանը, որ վրացիները ապստամբությունը ծրագրելիս, փորձել էին հաշվի չառնել Հայաստանի գործոնը: Այս խնդիրը քննարկում է նաև «Հուսաբեր»-ը: Թերթի 1924թ. հոկտեմբերի 15-ի համարում հրատարակվում է Ն. Ժորդանիայի նամակն ուղղված Վրաստանում գտնվող իր գաղափարակիցներին: Այստեղ վրացի վտարանդի քաղաքական գործիչը Վրաստանի ապստամբության առիթով գրում է, որ «չի կարելի յոյս դնել դաշնակների վրայ, նրանցից պէտք է խուսափել, նրանք յետոյ մեզ հետ կմիանան»[19]: Ըստ էության, Ն. Ժորդանիան ակամա խոստովանում է, որ Դաշնակցությունը դեմ կլիներ այդ ապստամբությանը: Վստահաբար այդ պատճառով էլ հայ վտարանդի քաղաքական ամենազդեցիկ կազմակերպությունը ի սկզբանէ տեղյակ չի եղել ապստամբության մասին: Հայկական կողմի դեմ լինելու գլխավոր փաստարկն, անշուշտ, հաղթանակի ոչ իրատեսական լինելն էր:

«Հուսաբեր»-ն անխնա քննադատում է վրաց մենշևիկների առաջնորդին. «Դաշնակցութիւնը դէմ եղած է, կրնայ դէմ ըլլալ ու դէմ պիտի ըլլար անշուշ այն անխորհուրդ քայլին, զոր տհասօրէն ձեռնարկած էին Ժորդանիայի գաղափարակիցները, այնքան զոհ ու արիւն տալով կարմիր գազաններուն: Վրաստանի ձախողած ապստամբութիւնը անգամ մըն ալ գուգայ դարձի բերելու Անդրկովկասի ժողովուրդներու համերաշխութեան եւ համագործակցութեան ոչ-անկեղծ քարզիչները եւ համոզելու զանոնք, որ նախ՝ ազատագրումը պոլշեւիկեան լուծէն՝ պիտի գայ Ռուսիայէն եւ ոչ Ռուսիոյ եզրային երկիրներէն, եւ երկրորդ՝ Անդրկովկասի բոլոր ժողովուրդներուն եւ անոնցմէ իւրաքանչիւրին ազատագրումը ամէն կարգի ու գոյնի բռնավորներէ պիտի գայ ու կրնայ գալ միայն Անդրկովկասի բոլոր ժողովուրդներուն անվերապահ, անկեղծ ու համերաշխ գործակցութեամբ»[20]: Փաստորեն, «Հուսաբեր»-ը ևս հակաբոլշևիկյան պայքարում կարևորում է ռուսական հակաբոլշևիկ հանրության նախաձեռնությունը, ինչպես նաև, որը պակաս կարևոր չէ, այսրկովկասյան ժողովորդների ներկայացուցիչների միասնական և համերաշխ գործունեությունը:

Այսպիսով, Կահիրեի դաշնակցական «Հուսաբեր» օրաթերթը ևս ողջունելով վրաց ազգային-քաղաքական ուժերի և հասարակության ըմբոստությունը հանուն ազատության և անկախության, կարևոր է համարում իրադրության հստակ գնահատումը, ուժերի հարաբերակցության, միջազգային կացության, փոխադարձ շահերի վրա հիմնված համագործակցության և այլ գործոնների հաշվի առնելը:

---

[19] Նույն տեղում, 15 հոկտեմբերի:

[20] «Յուսաբեր», Գահիրէ, 1924, 16 հոկտեմբերի:

Վերևում նշեցինք, որ Վրաստանի հակախորհրդային ապստամբությունը խստորեն քննադատվեց նաև սփյուռքի ռամկավար մամուլի կողմից:

Կահիրեի «Արեւ» թերթը գրում է, որ ապստամբության նպատակը եղել է «ազդել Լոնտոնի անկլօռուս բանակցութեանց վրայ եւ ապա Ազգերի Դաշնակցութեան ժողովին վրայ»: Թերթը նաև փաստում է, որ ապստամբությունը որևէ օգուտ չտվեց վրաց ժողովրդին[21]: Ըստ էության, ռամկավար պարբերականը համակարծիք է դաշնակցական թերթերի այն պնդմանը, որ Վրաստանի ապստամբությունը ավելի շատ քարոզչական նպատակներ է հետապնդել: Ավելին, «Արեւ»-ը կասկածներ է հայտնում, որ ապստամբությունը կարող էր հրահրված լինել անգլիացիների կողմից:

«Արեւ»-ի կարծիքով, Վրաստանն իր մարդկային խիստ սահմանափակ ռեսուրսներով չէր կարողանա ապստամբության միջոցով անկախանալ Ռուսաստանից: Իսկ ինչ վերաբերում է Հայաստանի խնդրին, ապա թերթը գտնում է, որ Վրաստանի «խռովութիւններուն հետեւանքով Արեւելքը կը բռնկի և այդ հրդեհին մէջ Հայաստանն ալ ունենայ իր կորուստներն ու զոհեր»[22]: Փաստորեն, ռամկավարների պարբերականի համար ևս Վրաստանի ապստամբության ծավալումը վտանգներ է պարունակում Հայաստանի համար:

Ռամկավար-ազատական կուսակցության ամերիկյան պաշտոնաթերթ «Պայքար»-ը համոզմունք է հայտնում, որ Վրաստանի ապստմաբությունը «պէտք չէ ազատագրական շարժումներու հետ շփոթել»: Այն, ըստ թերթի պարզապես մենշևիկների կողմից իշխանությունը նվաճելու փորձ է եղել, ինչպիսին, ինչպես կարծում է թերթը, եղավ 1921թ. փետրվարին Հայաստանում[23]: Մեր կարծիքով, Վրաստանի դեպքերը կարելի է նաև ազատագրական շարժում համարել: Վրաց քաղաքական ուժը ժողովրդի աջակցությամբ փորձում է թոթափել օտար՝ բոլշևիկյան լուծը: Այստեղ ավելի շատ այն տպավորությունն է, որ Վրաստանի օրինակով ռամկավարների թերթը փորձում է քննադատել Հայաստանի հակախորհրդային ապաստամբության ղեկավար կուսակցությանը՝ Դաշնակցությանը:

«Պայքարի» խմբագրականը իրատեսական չի համարում արտաքին (եվրոպական երկրների, մասնավորապես՝ Անգլիայի) միջամտությունը

[21] «Արեւ», Գահիրէ, 1924, 17 սեպտեմբերի:
[22] Նույն տեղում:
[23] «Պայքար», Պոսթըն, 1924, 10 սեպտեմբերի:

Վրաստանի ապստամբությանը[24]: Ի դեպ, Անդրկովկասի կոմունիստների առաջնորդ Ալեքսանդր Մյասնիկյանը Վրաստանի չորրորդ ռայոնական կոմիտեի կուսակցական կազմակերպության ընդհանուր ժողովին ներկայացրած զեկույցում նշում է, որ «Մենշևիկների նշանաբաններից մեկը կայանում էր այն բանում, թե անգլիական էժան ապրանքներ են ստացվելու, անգլիացիք կը տան ամեն ինչ»[25]: Այն, որ ապստամբության ղեկավարները ակնկալել են դրսի՝ մասնավորապես անգլիական աջակցություն, չի կարելի բացառել, սակայն, ինչպես նշեցինք, գործնականում հաշվարկները սխալ էին:

«Պայքար»-ը նույնպես չէր բացառում Թուրքիայի հնարավոր գործակցությունը Վրաստանի ապստամբությանը: «Այս տեսակ ծրագիր մը յաջողացնելու համար շատ բնական էր, որ Կովկասին շատ աւելի մօտ եղող եւ սահմանակից տերութիւն մը ըլլար իրենց գործակցողը եւ քէմալական Թիւրքիան կը վայելէր այդ առավելութիւնը: Հիմնական տուեալներ չկան Թուրքիոյ այդ շարժումին նպաստելու իրականութիւնը հաստատող, սակայն երբ նկատի առնենք Վրաստանի աշխարհագրական դիրքը, բնակչութեան քանակը, տնտեսական պայմանները եւ գոյութիւն ունեցող դժգոհութեան չափանիշը, դժուար չէ համոզուիլ, որ Վրաստան այդ տեսակ շարժում մը պիտի չընէր երբէք, վստահելով միմիայն իր սահմանափակ ուժերուն»,- գրում է թերթը[26]: Հաջորդ համարում թերթի խմբագրականը «մեղադրում» է վրացի մենշևիկներին, որոնք «Վրացեանի հետքերուն վրայ կը քալեն եւ օգնութիւն կ'աղերսեն էնկիւրիէն, մոռանալով, որ թուրքեր գործիք կ'ընեն զիրենք, բայց երբեք չեն օգներ, չեն կրնար օգնել իրենց»[27]: Թերթն այստեղ ակնարկում է 1921թ. փետրվարյան ապստամբության ժամանակ Հայրենիքի փրկության կոմիտեի նախագահ Սիմոն Վրացյանի հեռագիրը թուրքերին, որով ակնկալվում էր քեմալականների «աջակցությունը» ապստամբներին: Փաստորեն, փորձ է արվում համեմատել Հայաստանի և Վրաստանի երկու ապստամբությունները, և նույն սխալները, որոնք թույլ են տալիս ապստամբության ղեկավարները: Թե Հայաստանի, թե Վրաստանի պարագայում Թուրքիայից օգնություն ակնկալելն ուղղակի միամտություն էր: «Պայքար»-ը վրացիներին «մաղթում

[24] Նույն տեղում, 1924, 19 սեպտեմբերի:
[25] «Մարտակոչ», Թիֆլիս, 1924, 16 սեպտեմբերի:
[26] «Պայքար», 1924, 26 սեպտեմբերի:
[27] Նույն տեղում, 27 սեպտեմբերի:

է» դասեր քաղել հայերից, և օգնություն չակնկալել Եվրոպական երկրներից, որպեսզի երկիրը «արեան ծով չդառնայ»[28]:

«Պայքար»-ը Վրաստանի հակախորհրդային ապստամբության հաղթական ելքը բացառում էր նաև այլ փաստարկով: «Եթէ նոյնիսկ խորհրդային իշխանութիւնը տապալի, հին կարգերու վերահաստատութենէն կամ ուրիշ դրութիւնէ մը ոչ նոյն ինքը ռուս ժողովուրդին, ոչ ալ միւս ազգութեանց համար շահ ու օգուտ, կամ այսօրուընէ աւելի ազատութիւն եւ իրաւունքներ կարելի է ակնկալել: Բաւական է դիտել, որ Վրաստանի վերջին խառնաշփոթութեանց առթիւ ռուս հակախորհրդային հոսանքներու թերթերը արտասահմանի մէջ շարժումը գոհունակութեամբ ողջունեցին իբրեւ դժգոհութեան ցոյց եւ ըմբոստութիւն խորհրդային իշխանութեանց դէմ, բայց Վրաստանի անկախութեան եւ Վրաստանի մէնշեւիկներուն հետապնդած նպատակներուն համար համակիր ու նպաստաւոր բառ մը չգրեցին»,- գրում է թերթը[29]: Փաստորեն, նույնիսկ բոլշևիկներին ատող ռուս տարագիր հանրությունը հակախորհրդային ապստամբության կողմնակից էր այնքանով, որքանով այն չէր հակասում ռուսական մեծապետական շահերին:

Այսպիսով, քննելով 1924թ. Վրաստանի հակախորհրդային ապստամբության արձագանքները սփյուռքահայ մամուլում, կարելի է կատարել որոշ ընդհանրացումներ:

1) Հաշվի առնելով Հայաստանին անմիջական հարևանությունը և նրա աշխարհագրական դիրքը՝ Վրաստանի դեպքերը խիստ մտահոգիչ են եղել սփյուռքահայ հասարակական-քաղաքական շրջանակների համար: Ապստամբության հետագա ծավալումը, ինչպես նաև Թուրքիայի հնարավոր միջամտությունը կարող էին ծանրագույն հետևանքներ ունենալ:

2) Վրաստանի ապստամբությունը որպես ազատագրական շարժում ընդունելու առումով երկակի մոտեցումներ են եղել: Դաշնակցական թերթերի համար այն, անկախ այլ հանգամանքներից, համարվում է երկրի անկախությունը վերականգնելու փորձ, իսկ ռամկավարները ապստամբությունը որակում են պարզ արկածախնդրություն:

3) Վրացական կողմը ներկայացնող քաղաքական կազմակերպությունը այսրկովկասյան տարածաշրջանային խնդիր լուծելու մարտահրավերին ընդառաջ հերթական անգամ ստորադասում է հայկական գործոնը, որը, մեր կարծիքով, ձախողման գլխավոր պատճառ

[28] Նույն տեղում, 3 հոկտեմբերի:

[29] Նույն տեղում, 8 հոկտեմբերի:

կարող էր հանդիսանալ: Առանց Հայաստանի կամ հայկական կողմից մասնակցության Այսրկովկասում տարածաշրջանային որևէ ծրագիր չէր կարող իրագործվել: Այդ ծրագրի հաջողությունը մեծապես պայմանավորված կլիներ հայ-վրացական համագործակցությամբ:

4) Այսրկովկասյան տարածաշրջանային ցանկացած ծրագրի իրականացման համար պակաս կարևոր չէր նաև ռուսական գործոնը: Իրատեսական չէր առանց ռուսական կողմի հավանության հաջողություն արձանագրել ցանկացած նախաձեռնության մեջ:

**Խ. Ստեփանյան**

## ՎՐԱՍՏԱՆԻ 1924 Թ. ՀԱԿԱԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՄԱՄՈՒԼՈՒՄ

**Ամփոփում**

Սփյուռքահայ թերթերը, քննելով Վրաստանի 1924թ. հակախորհրդային ապստամբությունը, իրենց մտահոգությունն են հայտնում Հայաստանի անվտանգության առումով: Վրաստանի դեպքերը կարող էին տարածվել նաև Հայաստանում, որը կարող էր ունենալ ծանր հետևանքներ: Ինչ վերաբերում է ապստամբության բնույթին, ապա այստեղ տեսակետները բաժանվում են: Որոշ դեպքերում այն գնահատվում է որպես պայքար անկախության վերականգնման համար, որոշ դեպքերում՝ որպես պարզ արկածախնդրություն:

**Х. Степанян**

## ОТЗЫВЫ АНТИСОВЕТСКОГО ВОССТАНИЯ ГРУЗИИ В 1924 Г. В ПРЕССЕ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ

**Резюме**

Газеты армянской диаспоры, обсуждая антисоветское восстание Грузии в 1924 г., выражают свою озабоченность по поводу безопасности Армении. Грузинские события могли бы распространяться также в Армении, что мог иметь серьезные последствия. Что касается характера восстания, то здесь мнения разделяются. В некоторых случаях это рассматривается как борьба за восстановление независимости, в некоторых случаях как простой авантюризм.

**Kh. Stepanyan**

**THE REMARKS OF THE ANTI-SOVIET REVOLT IN GEORGIA IN 1924 IN THE PRESS OF ARMENIAN DIASPORA**

**Summary**

Considering the anti-Soviet rebellion in Georgia in 1924, the media of the Armenian Diaspora expresses its concern regarding the security of Armenia. The events in Georgia could spread in Armenia, which could have serious consequences. As to the essence of the uprising, the views are contradicted. In some cases, it is seen as a struggle for the restoration of independence, in other cases as a simple adventure.